ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 օգոստոսի 2024 թվականի N 1218 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1429-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի «Սոցիալական նպատակով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման և օգտագործման մասին պայմանագրերի կնքման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 10-ի N 884-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1429-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«16. Հայտերը ներկայացվում են առձեռն, փոստի, էլեկտրոնային փոստի միջոցով կամ «Բնապահպանության ոլորտի թվային ծառայությունների հարթակ» էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ հարթակ) միջոցով: 2025 թվականի հունվարի 1-ից հայտերը ներկայացվում են հարթակի միջոցով, իսկ անհաղթահարելի ուժի առկայության դեպքում՝ առձեռն կամ փոստով կամ էլեկտրոնային փոստով:».

2) 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«18. Լիազորված մարմինը հայտը և հայտին կից փաստաթղթերն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է փաստաթղթերի ամբողջականությունը: Հայտում կամ կից փաստաթղթերում թերությունների առկայության դեպքում լիազորված մարմինը եռօրյա ժամկետում առձեռն, փոստի, էլեկտրոնային փոստի միջոցով ստացված հայտերի դեպքում՝ գրավոր, իսկ հարթակով ստացված հայտերի դեպքում հարթակով ծանուցում է հայտատուին՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում վերացնելու լիազորված մարմնի նշած թերությունները: Լիազորված մարմնի կողմից հայտի քննարկման գործընթացի ժամկետը կասեցվում է մինչև հայտատուի կողմից փաստաթղթերում թերությունների վերացումը:».

3) 19-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«19. Լիազորված մարմինը հայտը և դրան կից ներկայացված փաստաթղթերն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում հայտատուի հետ կնքում է պայմանագիր կամ մերժում է հայտը: Պայմանագիրը կամ դրա կնքման մասին հայտի մերժման մասին տեղեկատվությունը տրամադրվում է հարթակի միջոցով, իսկ առձեռն կամ փոստով կամ էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացված հայտերի դեպքում՝ գրավոր: Սիրողական ձկնորսության մասին պայմանագրերը տրամադրվում են ինքնաշխատ եղանակով: Պայմանագիր կնքող անձի կողմից պայմանագրի ընդհանուր պայմաններին համաձայնությունը տրվում է հարթակով այն հաստատելու միջոցով:».

4) լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր՝ 20.1-ին կետով՝

«20.1. Լսված լինելու իրավունքն իրացնելու նպատակով լիազոր մարմինը գրավոր հրավիրում է հայտատուին՝ մերժման հիմքերը ներկայացնելու համար: Հայտատուի լսված լինելու իրավունքի իրացումն արձանագրվում է:».

5) 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«25. Հարթակով կնքված պայմանագիրը հայտատուին տրամադրվում է էլեկտրոնային փոստով, որի վրա առկա է պայմանագրի վավերականությունը փաստող՝ «արագ արձագանքման QR կոդ», որով ստուգվում է տրամադրված փաստաթղթի

վավերականությունը Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաս-տաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի միջոցով։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

08.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ